

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2005թ. մայիսի 4-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի պետ Ա.Պետրոսյանը մասնակցել է ք.Երևանում կայացած Եվրամիության և Եվրամիության անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի ներդրման ազգային ծրագրի N 24 «Ֆինանսական վերահսկում, ֆինանսական և բյուջետային դրույթներ» աշխատանքային խմբի կողմից մոտարկման ենթակա՝ Եվրամիության 1 օրենսդրական ակտի վերաբերյալ կենտրոնի փորձագետի հաշվետվությունը» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2005թ. մայիսի 20-ին ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Ազգային ծրագրի հետագա մշակման գործընթացը, մեթոդաբանությունը, աշխատանքների քայլը քննարկելու նպատակով փակ աշխատաժողովին,
- ✓ 2005թ. մայիսի 20-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ.Դավթյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական ռեսուրսների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ Վ.Օրոյանցը, նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի առաջին կարգի մասնագետ Ա.Մուրադյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակության հետ կապերի բաժնի 2-րդ կարգի մասնագետ Ա.Ասատրյանը մասնակցել են ք.Երևանում կայացած «Հայաստանում անցումային շրջանում տեղեկատվության թափանցելիության ապահովումը» կառավարության տեղեկատվության թափանցիկության ծրագրի ավարտի շնորհանդեսին,
- ✓ 2005թ. մայիսի 29-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դանիելյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած «Հայաստանի ֆինանսական համակարգի զարգացման ուղղություններն ու հիմնախնդիրները» խորագրով հանդիպմանը,
- ✓ 2005թ. մայիսի 31-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը և Յու. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում» խորագրով բաց ֆորումին,
- ✓ 2005թ. հունիսի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դանիելյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի պետ Ա. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ՀՀ զբոսաշրջության զարգացման 2006-2008թթ. պետական

ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը քննարկելու նպատակով փակ աշխատաժողովին,

- ✓ 2005թ. հունիսի 7-9-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գաբրիելյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Devinfo-ն և ՀԶՆ մոնիթորինգը» թեմայով ուսուցման դասընթացին,
- ✓ 2005թ. հունիսի 15-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ԵՄ և ԱՊՀ երկրների միջև համագործակցության բաժնի վարիչի տեղակալ Թորբիաս Բերգների հետ կլոր սեղանին,
- ✓ 2005թ. հունիսի 17-18-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Գ. Մարտիրոսովան և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Խոցելիության գնահատման հետազոտություն (ԽԳՀ) մեթոդաբանական և կազմակերպական խնդիրներ» թեմայով խորհրդակցությանը,
- ✓ 2005թ. հունիսի 20-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի վեցերորդ նիստին,
- ✓ 2005թ. հունիսի 30-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Աշխատակազմի ղեկավարի դերը Հայաստանի ժամանակակից քաղաքացիական ծառայության համակարգում» թեմայով աշխատանքային հանդիպմանը:

-
- ✓ **Ծանուցում.** «Լրատու թիվ 2(32), 2005թ. մարտ-ապրիլ» համարում նշված «SPSS ծրագրային փաթեթի կիրառումը վիճակագրական և սոցիալական հետազոտություններում» թեմայով դասընթացին (2005թ. ապրիլի 13-21-ը ք. Երևան) ՀՀ ԱՎԾ աշխատակիցները չեն մասնակցել: